ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ 5/5 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 68,71 ՔԱՌԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունով, 25-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N 01/17/08219-2024 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց 5/5 հասցեին կից 68,71 (վաթսունութ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը (Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -25 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Տարածքի տեղաբաշխումը Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծում 1:2000

Հավելված
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2025թվականի օգոստոսի 14-ի
N 76-Ա որոշման



ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հողամասը ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությունից փոփոխվել է հասարակական կառուցապատման

ԴԻՏԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ